

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԱՌՆԻԻ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՌՈՒՅՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց հանգուցյալ ճարտարապետ Ալեքսանդր Արամի Սահինյանի «Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը» գիրքը: Հեղինակը սույն ծավալուն ուսումնասիրության մեջ հանգամանորեն վերլուծել է Գառնիի ճարտարապետական հուշարձանների հետ կապված մինչ այս չլուծված խնդիրները:

Պատմական Հայաստանի տարածքի վրա նախաքրիստոնեական շրջանում բավականին հարուստ է եղել հեթանոսական պաշտամունքի կառույցների ցանկը. Վան, Անի, Արմավիր, Երվանդաշատ Երվանդակերտ, Արտաշատ և այլն: Մատենագրական վկայություններից ենթադրվում է, որ այս կառույցների կգալի մասը իրենց ժամանակին համարվել են ճարտարապետական նշանակալից ստեղծագործություններ, բայց որոնք, ցավոք սրտի, համարյա չեն պահպանվել բնության տարերքի և այլ հանգամանքների հետևանքով:

Գառնիի պալատական համալիրից համեմատաբար լավ են պահպանվել պալատական դահլիճը և բաղնիքը:

1946 թվականին Հ. Մանանդյանը Գառնիի նորահայտ հունարեն արձանագրության մասին կարդացած իր զեկուցման մեջ նշում է. «Հայկական մեծ անցյալի այս փառահեղ մնացորդը հայ ժողովուրդը պետք է պահի ամենամեծ խնամքով: ...Կարելի է հուսալ, որ կգա մի օր, երբ վերականգնված Գառնիի տաճարը կդառնա Սովետական Հայաստանի հոյակապ զարդերից մեկը»:

Դեռևս 1880-ական թվականներին հնագետ կոմս Ուվարովի առաջարկությամբ նախապատրաստվում էր տաճարի քարերի տեղափոխումը Թիֆլիս և վերականգնումը այնտեղ՝ ֆրանսիացի նշանավոր գիտնական Ֆրեդերիկ Դյուբուա դե Մոնպերեի կազմած նախագծով: Սակայն Երևանի նահանգապետի հաղորդումը կանխում է այդ ծրագիրը. «...տաճարի մասերը այնքան մեծ են և ծանր, որ սայլերով կամ ֆուրգոններով տեղափոխել հնարավոր չէ»:

Գառնիի հեթանոսական տաճարը կառուցվել է մեր թվագրության Ա դարում: 1679 թվականին ավերվել է երկրաշարժի հետևանքով: Տաճարի ամբողջական վերականգնումը, հենց իր տեղում, ավարտվել է 1975 թվականին: Վերականգնման աշխատանքները ղեկավարել է սույն ժողովածուի հեղինակը՝ ճարտարապետ Ալ. Սահինյանը:

Դեռևս ավերակ վիճակում դիտելով Գառնի հեթանոսական տաճարը, հայ պատմական ճարտարապետության մեծագույն հետազոտող Թ. Թորամանյանը գրում է. «...այս կոթողը, եթե Հռոմի ծաղկյալ դարերուն Հռոմի մեջ կանգնեին՝ անկեց ավելի վայելչություն և շքեղություն չէին կարող տալ»:

Գրքում հեղինակը զետեղել է 60-ից ավելի չափագրություններ, վերակազմության գծագրեր և 130-ից ավելի լուսանկարներ, որոնց շնորհիվ ժողովածուն ավելի ամբողջական է դառնում:

Սույն ժողովածուն անգնահատելի նվեր է հայկական ճարտարապետության պատմությամբ հետաքրքրվողների համար:

Այստեղ տեղին է զետեղել Գևորգ Էմինի «Գառնո տաճարի առջև» բանաստեղծությունը՝ գրված Ալեքսանդր Սահինյանի հիշատակին.

Աշխարհի բոլո՜ր կոթողները հին
Կանգո՜ւն են լինում,
Շե՛ն ու հաստատո՛ւն.
Եվ հետո՛ միայն՝

Խարխլվո՞ւմ, քանդվո՞ւմ,
Ավերա՞կ դառնում:

Բոլո՞րն անխտիր,—
Բացի այս մեկի՛ց,
Որ հակառա՞կ է ծնունդ ու մահվան
Հաստատ օրենքին,
Ինչպես ամե՛ն ինչ՝
Հակառակության ոգի այս հողում...

Դարե՞ր շարունակ
Այնքան շա՞տ ենք մենք
Տեսել այս չքնաղ տաճարն... ավերա՞կ,
Որ, թվում է, թե.
Նա, հենց այդպես էլ... ավե՞ր է ծնվել,
Եվ միայն այսո՛ր, մեր աչքի առջև
Կառուցվե՞լ, շինվե՞լ...

Կամ, թվում է մեկ,
Թե Տրդատ արքան
Բերել-թափել է քարերը նրա,
Երկու պատ շարել
Ու... թողել կիսա՞տ
(Անթի՞վ տարիներ ու դարե՞ր անթիվ)

Մինչև... Սահինյան Ալեքսանը գա՛
Եվ... գործն ավարտի՛:

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԾԱՆՔ ԱՂԹԱՄԱՐԻ ՏԱՃԱՐԸ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը, արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, լույս ընծայեց Ստեփան Խաչատուրի Մնացականյանի «Աղթամար» գիրքը: Աշխատությունը նվիրված է հայկական ճարտարապետության և արվեստի ամենանշանավոր կենտրոններից մեկին՝ անկրկնելի Աղթամարի տաճարին:

Աղթամարի տաճարը կառուցվել է Ժ դարում Գագիկ Արծրունի թագավորի և միջնադարի հայ նշանավոր ճարտարապետ Մանուելի կողմից: Այն իր կառուցողական և գեղագիտական առանձնահատկություններով աննախադեպ է հայ ճարտարապետության պատմության մեջ: Աղթամարի տաճարը իր ճարտարապետական, քանդակագործական և նկարչական ամբողջականությամբ չունի օրինակը նաև քրիստոնյա բոլոր ժողովուրդների ճարտարապետական մշակույթի պատմության մեջ:

Աղթամարի տաճարի առաջին, համեմատաբար հիմնավոր հետազոտությանը ձեռնարկել է ազգագրագետ Երվանդ Լալայանը: Այնուհետև տաճարի ուսումնասիրությանը ձեռնարկել է Վ. Բախմանը, որն առաջինը եվրոպական աշխարհին ներկայացրեց տաճարն իր բոլոր հստականշական կողմերով: Այս երկու հեղինակների աշխատությունները հիմք հանդիսացան Իոսիֆ Ստրժիգովսկու համար, որը հայկական ճարտարապետության պատմությանը նվիրված իր երկհատոր աշխատության մեջ հանգամանորեն ներկայացրեց Աղթամարի նշանավոր տաճարը:

1930-ական թվականներին Աղթամարի պատկերաքանդակներին անդրադարձել է Գարեգին Լևոնյանը:

1945 թվականին լույս է տեսել ֆրանսահայ հայտնի արվեստաբան Սիրարփի Տեր-Ներսեսյանի աշխատությունը՝ նվիրված հայբյուզանդական մշակութային առնչություններին: Այստեղ հեղինակը առանձնակի տեղ է հատկացրել Աղթամարի տաճարին:

Աղթամարին նվիրված ընդարձակ մենագրությամբ հանդես է եկել նաև Հովսեփ Օրբելին: Իր նշանակալից ուսումնասիրության մեջ Հ. Օրբելին հանգամանորեն լուսաբանել է Աղթամարի տաճարի և նրան հարակից շինությունների ճարտարապետությունը և տաճարը զարդարող պատկերաքանդակները:

Իրենց ծավալուն ուսումնասիրություններով Աղթամարի վանքին անդրադարձել են հայ և օտար բազմաթիվ գիտնականներ. Լ. Դուրնովո, Լ. Ագարյան, Դավիթ Տալբոտ Ռեյս և ուրիշներ:

Ստեփան Մնացականյանը իր սույն ուսումնասիրությամբ գալիս է նոր խոսք ասելու Աղթամարի վանքին նվիրված: Աշխատությունը բաղկացած է ծավալուն ներածականից և երկու մեծածավալ մասերից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձին գլուխները: Գրքում զետեղված են շուրջ 110 գունավոր և սև-սպիտակ լուսանկարներ և գծագիր չափագրություններ:

Միջնադարի հայ ճարտարապետության գոհարներից մեկի՝ Աղթամարի տաճարին նվիրված սույն ուսումնասիրությունը նախատեսված է ճարտարապետների, արվեստագիտների և ընթերցող լայն շրջանների համար: